

Հաստատված է  
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի  
«02» սեպտեմբեր 2014 թ. թիվ 59 նիստում  
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն  
Ա. Սարգսյան



## Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ  
ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի կիրառական հոգեբանության կենտրոնը (այսուհետև՝ Կենտրոն) ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի (այսուհետև՝ ԳԿՄԿ) կառուցվածքային ստորաբաժանում է, որը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ԳԿՄԿ-ի և սույն կանոնադրությանը համապատասխան:
- 1.2. Կենտրոնը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել ԳԿՄԿ տնօրենի ներկայացմամբ՝ ԳԿՄԿ գիտական խորհրդի որոշմամբ:
- 1.3. Սույն կանոնադրությունը կարող է լրացվել կամ փոփոխվել ԳԿՄԿ տնօրենի ներկայացմամբ՝ ԳԿՄԿ գիտական խորհրդի որոշմամբ:

## 2. ԿԵՆՏՐՈՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Կենտրոնի նպատակներն են.

- ա) աջակցել Հայաստանի Հանրապետությունում կիրառական հոգեբանության զարգացմանն ու որակի բարձրացմանը,
- բ) վարժանքների և պրակտիկայի միջոցով նպաստել հոգեբանություն մասնագիտացմամբ ուսանողների մասնագիտական կրթության որակի բարելավմանը,
- գ) ԳԿՄԿ ուսանողներին, աշխատակիցներին և բնակչությանը մատուցել խորհրդատվական և զարգացնող բնույթի ծառայություններ,
- ե) իրականացնել գիտահետազոտական աշխատանքներ կիրառական հոգեբանության տարբեր ոլորտներում:

2.2. Կենտրոնի խնդիրներն են.

- ա) ԳԿՄԿ և այլ բուհերի հոգեբանության բաժինների մագիստրատուրայի ուսանողների մասնագիտական պրակտիկայի կազմակերպումը,
- բ) պրոֆեսորադասախոսական անձնակազմի և հոգեկան առողջության ոլորտի մասնագետների մասնագիտական կրթության և հմտությունների զարգացումը,

- գ) ԳԿՄԿ ուսանողներին, անձնակազմին և բնակչությանը հոգեախտորոշիչ, խորհրդատվական և զարգացնող ծառայությունների մատուցումը,
- դ) պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից մագիստրատուրայի ուսանողների խորհրդատվական և հոգեախտորոշիչ աշխատանքների վերահսկումը (սուպերվիզիա),
- ե) հոգեբանության բնագավառում հետազոտությունների կազմակերպումը, անցկացումը և արդյունքների վերլուծությունը,
- զ) օտարերկրյա հոգեբանական գիտական և հասարակական կառույցների հետ փոխհարաբերությունների հաստատումը, ամրապնդումը և զարգացումը,
- է) գիտաժողովների, սեմինարների, քննարկումների կազմակերպումը,
- ը) գիտական նյութերի, ամսագրերի և ժողովածուների հրատարակումը,
- թ) հոգեբանական խորհրդատվության բնագավառում հավատարմագրման համակարգի մշակումը:

### **3. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

- 3.1. Կենտրոնի աշխատանքների համակարգումն իրականացնում է ԳԿՄԿ հոգեբանության ամբիոնի վարիչը:
- 3.2. Կենտրոնի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է Կենտրոնի տնօրենը, ում աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է ԳԿՄԿ տնօրենը:
- 3.3. Կենտրոնի տնօրենը.
  - ա) հետևում է Կենտրոնի մասնագիտական և ֆինանսական գործունեության կատարմանը,
  - բ) կազմակերպում և ղեկավարում է Կենտրոնի ընթացիկ ախտատանքները,
  - գ) վերահսկում է Կենտրոնի բաժինների(դրանց առկայության պայրագայում) աշխատանքները,
  - դ) ԳԿՄԿ տնօրենին առաջարկություն է ներկայացնում Կենտրոնի աշխատողներին օրենքով սահմանված կարգով խրախուսելու, կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ,

ե) իր բացակայության ժամանակ առաջարկություն է ներկայացնում տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակվելու վերաբերյալ,

զ) պատշաճ կարգով կազմակերպում է Կենտրոնում տարվող գործավարությունը, Կենտրոնի տնօրենը պատասխանատու է Կենտրոնի կողմից իրականացվող աշխատանքների պատշաճ որակի համար:

3.4. Կենտրոնում իրականացվող ծրագրերը համակարգում է Կենտրոնի ծրագրերի համակարգողը, ում աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է ԳԿՄԿ տնօրեն:

3.5. Կենտրոնի հաստիքացուցակը սահմանում է ԳԿՄԿ տնօրենը:

3.6. Կենտրոնի կառուցվածքի մեջ են մտնում խորհրդատվական, գիտահետազոտական, մասնագիտական պրակտիկայի :

3.7. Հոգեբանական խորհրդատվության բաժինն իրականացնում է ԳԿՄԿ ուսանողների, աշխատողների, կազմակերպությունների և բնակչության հետ անհատական և խմբային խորհրդատվական աշխատանքներ:

3.8. Գիտահետազոտական բաժինն իրականացնում է հոգեբանական հետազոտական աշխատանքներ, կազմակերպում է գիատժողովներ, սեմինարներ, քննարկումներ:

3.9. Մասնագիտական պրակտիկայի բաժինը կազմակերպում է ԳԿՄԿ հոգեբանության բաժնի ուսանողների և հոգեկան առողջության ոլորտի մասնագետների գործնական աշխատանքները, հոգեբանական պրակտիկայի անցկացումը՝ ուսուցողական վարժանքների, դասախոսությունների, սեմինարների, գործնական պարապմունքների միջոցով: